

Φ CONVERSE BANK

Քույրի համայնք



**ՔԱՐՏԵՐԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐ**

Նարգելի Նախախորդ,

Խեղդում ենք հանգամանքներ ծանոթանալ ստորև նշված քարտերի փրամադրման և օգտագործման կանոններին, որոնք կարգավորում են վճարային քարտերի փրամադրման հետ կապված Զարգացանի և Կոնվերս Բանկի միջև պայմանագրային հարաբերությունները: Խեղդում ենք պահպանել սույն կանոնները (այսուհետ՝ «Կանոններ») և դրանց բոլոր փոփոխություններն ու լրացումները: Զարգացանի փրամադրման և սպասարկման դիմաց գանձվող վճարները սահմանվում են Բանկի կողմից քննուկնող սակագներով (այսուհետ՝ «Սակագներ»), որոնք համարվում են Կանոնների անբաժանելի մասը:

1. ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԻ ՔԱՐՏԵՐԸ

1.1. «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ն առաջարկում է Visa/MasterCard փեսակի միջազգային և ArCa Classic փեղական օգտագործման քարտեր: Visa/MasterCard քարտերը կարող եք օգտագործել ՆՏ և արտերկրյա այն առևտրի/սպասարկման և կանխիկացման կետերում, որոնց վրա առկա են VISA/MasterCard լոգոտիպերը: ArCa Classic քարտերը սպասարկվում են միայն ՆՏ փրամադրում՝ այն կետերում, որտեղ առկա է ARCA լոգոտիպը: «Կոնվերս բանկի» քարտերը հնարավորություն են ընձեռում անկանխիկ վճարումներ կատարել և կանխիկ գումարներ սրանալ բանկոմատներում (ATM), ինչպես նաև անկանխիկ վճարումներ իրականացնել առևտրի և սպասարկման կետերում փեղադրված էլեկտրոնային փերմինալներում (point of sale (POS) terminal): «Կոնվերս Բանկի» միջազգային VISA/MasterCard փեսակի

քարտերը թույլ են փայլա վճարումներ և փոխանցումներ իրականացնել նաև ինտերնետի միջոցով:

1.2. Քարտերը փրամադրվում են ՆՏ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով:

1.3. Քարտերը համարվում են Բանկի սեփականությունը և Զարգացանին փրամադրվում են օգտագործման իրավունքով: Քարտերը փրամադրվում են լրացված Դիմումը Բանկ ներկայացնելու պահից 1-ից 5 բանկային օրվա ընթացքում:

1.4. Քարտը սրանալուն պես Զարգացանը պետք է ստորագրի քարտի հակառակ երեսին առկա ստորագրության համար նախատեսված դաշտում: Քարտով կատարվող գործարքների արդյունքում փրամադրվող անդորրագրերի վրա դրվող ստորագրությունը պետք է համապատասխանի քարտի վրա առկա ստորագրությանը:

Անհամապատասխանությունը հիմք է Քարտի սպասարկումը մերժելու համար:

1.5. Քարտի հետ մեկտեղ, փակ ծրարով Զարգացանին փրամադրվում է ժամկազիր (PIN), որը կիրառվում է բանկոմատներում և առևտրի սպասարկման կետերում գործարքներ կատարելիս Զարգացանին նույնականացնելու համար: Ծածկազիրը ենթակա չէ հրապարակման կամ փրամադրման երրորդ անձանց: Նարկավոր է ուշադիր լինել գաղտնազիրը մուտքագրելիս, քանի որ այն երեք անգամ անընդմեջ սխալ մուտքագրելու դեպքում քարտն ավտոմատ կարգելափակվի և կարգելահանվի Զարգացանի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա, որի դիմաց

կգանձվեն Բանկի Սակագներով նախատեսված վճարներ:

1.6. Բարքի վրա նշված գործողության ժամկետի ավարտից հետո Բարքապանը պարտավոր է քարտը վերադարձնել Բանկ կամ ոչնչացնել այն՝ քարտը մագնիսական ժապավենի վրայով երկու մասի բաժանելով:

1.7. Բարքապանի Բարքի վրա նշված գործողության ժամկետի ավարտից հետո Բանկը, հաշվի առնելով Բարքապանի բանկային պարտությունը, իրավունք ունի առանց Բարքապանի լրացուցիչ կարգադրության վերաթողարկել վերջինիս Բարքը, եթե Բարքային հաշվին առկա միջոցները բավարար են Սակագներով նախատեսված վճարների գանձման համար: Բարքապանը կարող է հրաժարվել Բարքի վերաթողարկումից՝ քարտի գործողության ժամկետի ավարտից առնվազն 10 (տասը) բանկային օր առաջ Բանկին գրավոր ծանուցելով:

1.8. Բարքապանը պարտավորվում է միջոցներ ձեռնարկել՝ Բարքի անվտանգությունն ապահովելու և դրա անթույլատրելի օգտագործումը բացառելու համար: Խորհուրդ է փրվում առանձնահատուկ ուշադրություն ցուցաբերել ծածկագրի մուտքագրում պահանջող գործատուությունների նկատմամբ, քանի որ դրանց համար պարասխանավորությունը կրում է միայն Բարքապանը:

Բարքի օգտագործման անվտանգությունն ապահովելու նպատակով Բարքապանին խորհուրդ է փրվում.

ա) Բարքը պահպանել ապահով վայրում, այնպես, որ այն մարչելի չդառնա այլ սնձանց: Բարքը չպահել էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրների (բջջային հեռախոսների, հեռուստացույցների և այլ էլեկտրական տեխնիկայի) մոտ, ինչպես նաև այլ քարտերի հետ մեկտեղ:

բ) Ծածկագիրը չտրամադրել երրորդ անձանց՝ ներառյալ Բանկի աշխատակիցներին: Խեղդում ենք հիշել ծածկագիրը և չգրառել այն որևէ տեղ, առավել ևս՝ Բարքի կրկնամասում: Բարքի և ծածկագրի համարն ոչ պահպանումը խորհուրդ չի փրվում:

գ) Չպարասխանել էլեկտրոնային կամ փոստային նամակների, ինչպես նաև այլ հաղորդագրությունների, որոնք պահանջում են հայտնել Ձեր ծածկագիրը, քարտի համարը կամ քարտի հակառակ երեսին առկա եռանիշ թվանշանները (CVV2 կոդը):

դ) Եթե ինտերնետի միջոցով գործատուություն կատարելիս պահանջվում է ծածկագրի մուտքագրում, անհապաղ հրաժարվել գործատուությունից: Ծածկագիրն անհրաժեշտ է միայն բանկում արևելում և կանխիկացման համար նախատեսված POS տերմինալներում գործատուությունների համար, ինչպես նաև որոշ դեպքերում նաև առևտրային կետերում գործատուությունների ընթացքում: Ինտերնետով գործարքներ կատարելիս անհրաժեշտ է

օգտվել միայն վարսեղի կայքերից:

և) Բանկումարներով գործառնություններ իրականացնելիս նախապատվություն տալ Կոնվերս Բանկի բանկումարներին: Նպունել, որ ծածկագիրը մուտքագրելիս այն տեսանելի չլինի այլ անձանց համար: Անհապաղ դիմել Բանկ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ Ձեր ծածկագիրը հայտնի է դարձել այլ անձանց:

զ) Նպունել, որ POS-տերմինալներով անկանխիկ գործարքներ կատարելիս վճարումն իրականացվի Ձեր ներկայությամբ և Զարքը դուրս չքերվի Ձեր տեսադաշտից: Նախքան վճարման անդորրագիրը ստորագրելը ստուգել դրա վրա նշված վճարման ենթակա գումարը:

1.9. Զարքապանն իրավունք ունի դիմել Բանկին իր քարտային հաշվին կից մեկ և ավելի լրացուցիչ քարտերի փրամադրման համար: Լրացուցիչ քարտեր փրամադրվում են Զարքապանի կողմից ներկայացված դիմումի և հայրի հիման վրա՝ նշելով լրացուցիչ քարտի օգտագործման ամսական սահմանաչափը: Լրացուցիչ քարտերով կատարված բոլոր գործառնություններով Բանկի առջև պարտախանաբվությունը անմիջականորեն կրում է Զարքապանը:

1.10. «Կոնվերս բանկ» ՓԲԸ առաջարկվող ծառայությունների ներկայիս գործող սակագներին Զարքապանը կարող է փեղեկանալ սույն փեղեկարկական ամփոփագրում գեղեղված գովազդային փեղե-

կարվական թերթիկներից, ինչպես նաև Բանկի մասնաճյուղերի և Բանկի www.conversebank.am ինտերնետային կայքի միջոցով:

2. ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԿՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՆԱԲԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կոնվերս Բանկի վճարային քարտ սրանալու համար Զարքապանը պետք է լրացնի 'Իմում' Բանկի սահմանած փայային ձևին համապատասխան: Այն ստորագրելով՝ Զարքապանը հավաստիացնում է, որ ամբողջությամբ ընդունում է Կանոնները և Սակագները և պարտավորվում է ղեկավարվել դրանցով: Բանկի և Զարքապանի միջև Զարքի փրամադրման և օգտագործման պայմանագիրը համարվում է կնքված այն պահից, երբ Բանկը հաստատում է պայմանագրի կնքումը՝ Զարքապանի հետ երկկողմանի գրավոր պայմանագիր ստորագրելով և/կամ Զարքը Ձեզ հանձնելով:

2.2. Բանկն իրավունք ունի փոփոխել սույն Կանոնները և Սակագները, Զարքապանին փեղեկացնելով նախապես վող փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առվազն 15 (փասնհինգ) օր առաջ: Եթե փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո Զարքապանը շարունակում է օգտվել քարտերից, Բանկը կհամարի, որ Զարքապանն ընդունել է փոփոխությունները:

2.3. Զարքապանն իրավունք ունի գրավոր դիմել Բանկին՝ պահանջելով լուծել քարտերի փրամադրման պայմանագիրը և վերացնել քարտի վարկային սահմանաչափը: Զարքապանի գրավոր դիմումը սրանալու պահից 5

(հինգ) բանկային օրվա ընթացքում Բանկը կդադարեցնի Զարգապանի քարտի սպասարկումը, մարելով Բանկի հանդեպ Զարգապանի պարտավորությունները, Բանկում վերջինիս հաշիվներին առկա գումարից: Քարտի սպասարկումը դադարեցնելուց հետո 45 (քառասունհինգ) օր անց Զարգապանի Զարգային հաշիվը կփակվի, իսկ դրա վրա առկա միջոցները կփոխանցվեն Զարգապանի բանկային հաշվին կամ վերջինիս ցանկությամբ կանխիկ կորամադրվեն Զարգապանին:

2.4. Բանկն իրավունք ունի ջուժել պայմանագիրը, եթե Զարգապանի հաշիվներին առկա գումարը բավարար չէ Բանկի հանդեպ Զարգապանի սրանձնած պարտավորությունների մարման համար:

3. ԶԱՐԳԱՅԻՆ ՆԱՇԻՎ

3.1. Քարտ փրամադրելու հետ մեկտեղ Բանկը Զարգապանի անունով բացում է քարտային հաշիվ, որով հաշվառվում են Զարգապանի քարտով կատարված գործարքները, Բանկի սակագներով սահմանված գործարքներից բխող բոլոր փեսակի գանձումները, միջնորդավճարները, ինչպես նաև գանձվող փույթերն ու փուզանքները:

3.2. Քարտով կատարված գործարքները, ինչպես նաև դրանցից բխող բոլոր փեսակի գանձումներն ու միջնորդավճարները քարտային հաշվին կարող են հաշվեգրվել գործարքի կատարման օրը կամ ավելի ուշ՝ համապատասխան վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանված ժամկետներում:

3.3. Քարտային հաշվի արժույթից փարբերվող արժույթով կատարված գործարքներ հաշվառելիս Բանկը կիրառում է գործարքի հաշվեգրման օրը Բանկի և համապատասխան վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանված փոխարժեքներ:

3.4. Նաշվառելիս Բանկը կարող է օգրագործել ինչպես Զարգային հաշվին առկա դրական միջոցները, այնպես էլ Բանկի կողմից Զարգապանին փրամադրած վարկային սահմանաչափը: Զարգապանն ընդունում է, որ վարկային սահմանաչափի բացակայության կամ ոչ բավարար լինելու դեպքում 3.1. կետում նշված գործառնությունների հաշվառման համար Բանկը կարող է առանց Զարգապանի նախնական հավանության կամ հերազա համաձայնության սահմանել կամ ավելացնել վարկային սահմանաչափ և արգելափակել Զարգապանի քարտը՝ գանձելով Սակագներով սահմանված փույթեր: Արգելափակված քարտը արգելափակումից կհանվի փույթերի և/կամ սահմանաչափի գերազանցած մասի վճարումից հետո:

3.5. Զարգապանի քարտային հաշվին առկա դրամական միջոցների նկատմամբ Բանկն ունի գրավի իրավունք՝ որպես Բանկի հանդեպ Զարգապանի բոլոր պարտավորությունների պարշաճ կատարման ապահովում: Զարգապանն իրավունք չունի քարտային հաշվին առկա միջոցները գրավ դնել՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության:

3.6. Զարգապանն ընդունում է, որ Բանկի հանդեպ իր բոլոր ժամկետանց պարտավորությունների գումարները Բանկն իրավունք ունի դուրս գրել Բանկում առկա Զարգապանի

անունով բացված բոլոր հաշիվներից:

4. ՔԱՐՏԱՅԻՆ ՆԱՇՎԻ ԴՐԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴԻ ԴԻՄԱՑ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՆԱՇՎԱՐԿՄԱՆ ՁԵՎ

4.1. Բանկի Մակագներով նախատեսված դեպքերում Քարտային հաշվի վրա առկա միջոցների նկատմամբ Բանկը հաշվարկում և վճարում է փոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են օրական կրովածքով և հաշվեգրվում Քարտային հաշվին յուրաքանչյուր հաշվետու եռամսյակի ավարտից հետո՝ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում:

4.2. Տոկոսագումարի վճարումից առաջ պահվում է 10% եկամտահարկ, բացառությամբ ռեզիդենտ իրավաբանական անձանցից:

4.3. Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է, ըստ սույն կանոններում զետեղված Բանկի Մակագներում ներկայացված փոկոսադրույթի, հերևյալ կերպ՝ օրինակ

1. Օրվա վերջին քարտային հաշվի դրական մնացորդը կազմում է 100,000 ՆՏ դրամ:

2. Հաշվի դրական մնացորդի դիմաց փարեկան փոկոսադրույթը կազմում է 1 %

Վճարվածքը → $\frac{100,000 \text{ (օրվա վերջին հաշվի դրական մնացորդ)} \cdot 1\% \text{ (փոկոսի տոկոսադրույթ)}}{365 \text{ (օրվա թվ)}} = 274.44$

Ենթադրենք, եռամսյակը կազմում է 91 օրացուցային օր և եռամսյակի ընթացքում հաշվի մնացորդը չի փոփոխվել, ապա.

Եռամսյակին նվազագույնը → $274.44 \text{ (օրվա վերջին հաշվի դրական մնացորդ)} \cdot 91 \text{ (եռամսյակի օրերի քանակ)} = 24,974.04$ (փոկոսադրույթ) → 24,974

Արդյունքում՝ եթե քարտային հաշվի դրական մնացորդը կազմի 100,000 ՆՏ դրամ՝ ամփոփոխ եռամսյակի ընթացքում, ապա եռամսյակի ավարտին հաշորդող առաջին 5 բանկային օրվա ընթացքում բանկային հաշվին կնստաբացվի 224.44 ՆՏ դրամ:

5. ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

5.1. Յուրաքանչյուր ամսվա 25-ի դրությամբ Բանկը Քարտապանին փրամադրում է քաղվածք, որն արտացոլում է նախորդ քաղվածքից հետո Քարտային հաշվով կատարված բոլոր գործառնությունները: Բանկը կարող է չփրամադրել քաղվածք, եթե հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Քարտապանի քարտային հաշվով որևէ շարժ չի կատարվել: Խնդրում ենք համեմատել պահպանված գործառնությունները հավասարող վճարային անդորագրերը իրականում կատարված գործարքների հետ, և անհամապատասխանությունների առկայության դեպքում քաղվածքի ձևավորման պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում Բանկին գրավոր փողեկացնել այդ մասին՝ ներկայացնելով գործարքի բողոքարկման հայտ՝ ըստ Բանկի սահմանած ձևի: Բանկն իրավունք ունի մերժել նշված ժամկետից ուշ ներկայացված բողոքարկման հայտերը:

6. ՔԱՐԿԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՍԱՆՄԱՆԱԶԱՓԸ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈՎՈՍԱԿՐՈՒՅՔԸ

6.1. Քարտերը կարող են լինել կրեդիտային, այսինքն՝ բացի քարտային հաշվին առկա սեփական միջոցներից Քարտապանը կարող է օգտվել նաև Բանկի կողմից պրամադորվող վերականգնվող վարկային սահմանաչափից:

6.2. Վարկային սահմանաչափի օգտագործված մասը ենթակա է մարման քաղվածքի ձևավորման օրվանից սկսած 15 (տասնհինգ) օր արբոնյալ ժամկետի ընթացքում, որի վերջնաժամկետը նշվում է Քարտապանի քաղվածքում: Բանկի Սակագները նախարեստն են նախորդ ամսվա ընթացքում օգտագործված սահմանաչափի նվազագույն գումար, որը Քարտապանը պետք է վճարի մինչև քաղվածքում նշված վերջնաժամկետը: Արբոնյալ ժամկետի ընթացքում քաղվածքում նշված պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում Քարտապանից վարկի օգտագործման դիմաց փոկոսներ չեն գանձվի, եթե այլ քան սահմանված չէ Սակագներով:

6.3. Վարկային սահմանաչափի պրամադորման պահից հետո 7 (յոթ) բանկային օրվա ընթացքում Քարտապանն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու վարկային սահմանաչափի պրամադորման պայմանագիրը՝ Բանկին վերադարձնելով վարկի գումարը և դրա նկատմամբ հաշվարկված փոկոսները:

6.4. Չնախորված պարտքի ոչ ամբողջական մարման դեպքում չմարված մասի նկատմամբ

հաշվարկվում են փոկոսներ՝ սկսած նախորդ ամսվա ընթացքում կատարված և չմարված առաջին իսկ գործարքի օրվանից՝ փարին հաշվարկելով 365 օր, իսկ նահանջ փարին՝ 366 օր:

Եթե Քարտապանը թույլ է տալիս քաղվածքում նշված վճարման ժամկետների խախտում, ապա Քարտապանի վարկային պարտավորությունը համարվում է ժամկետանց և չվճարված գումարի նկատմամբ հաշվարկվում է փուժանք՝ Սակագներով սահմանված կարգով և չափով:

6.5. Բանկը կարող է միակողմանիորեն փոփոխել փոկոսների չափը՝ այդ մասին նախապես Քարտապանին ծանուցելով սույն Կանոններով սահմանված կարգով: Շուկայում վարկերի փոկոսադրույքների էական փոփոխությունների, քարտային վարկերի պրամադորման պայմանների, ինչպես նաև փոխտեսական իրավիճակի վարքաբացման դեպքերում Բանկն իրավունք ունի նվազեցնել կամ վերացնել Քարտապանի քարտի վարկային սահմանաչափը՝ հետագայում Քարտապանին Կանոններով սահմանված կարգով ծանուցելով:

6.6. Արտարժույթով պրամադորվող վարկային սահմանաչափի նկատմամբ փոկոսները հաշվարկվում և գանձվում են ՄՊ դրամով՝ գործառնության կատարման պահին Բանկում գործող փոխարժեքով:

6.7. Տարեկան փաստացի փոկոսադրույքը ներկայացնում է բոլոր փոկոսներն ու այլ վճարումները՝ արտահայտված վարկի փարեկան փոկոսով, որոնք ենթակա են

վճարման վարկային սահմանաչափի սրացման և օգտագործման դիմաց: Տարեկան փաստացի տոկոսադրույքը ներառում է վարկային սահմանաչափի օգտագործման համար վճարվող տոկոսները, քարտային հաշվի սպասարկման վճարները և այլ ծախսեր: Նկարի ունեցեք, որ տարեկան փաստացի տոկոսադրույքը չի ներառում վարկը ժամանակին չմարելու համար գանձվող տույժերը, քարտային հաշվից կատարվող կանխիկացումների վճարները, քարտային հաշվով փոխանցումներ կատարելու համար գանձվող գումարները:

6.8. Քարտապանի վարկային սահմանաչափի տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը կասեմանլի Քարտը Քարտապանին հանձնելիս կամ սահմանաչափի գումարը հատկացնելիս Քարտապանի և Բանկի միջև ստորագրվող գրավոր համաձայնությամբ

6.9. Տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը հաշվարկվում է՝ ելնելով հետևյալ սկզբունքներից.

ա) Քարտապանի վարկային սահմանաչափի գործողության ժամկետը ենթադրվում է մեկ տարի,

բ) Սահմանաչափի փրամադրմանը հաջորդող օրը Քարտապանն ամբողջությամբ ծախսում է սահմանաչափի գումարը,

գ) Քարտապանը վարկային սահմանաչափը մարում է յուրաքանչյուր ամիս՝ արտոնյալ ժամկետի ավարտի վերջին օրը՝ պահանջվող նվազագույն չափով՝ համաձայն սույն Կանոնների 6.2 կետի:

6.10. Քարտապանի վարկունակությունը ստուգելու և վերահսկելու համար Բանկի իրավասու աշխատակիցներն իրավունք ունեն շարունակական հսկողություն իրականացնել Քարտապանի ֆինանսական վիճակի նկատմամբ և պահանջել ցանկացած տեղեկատվություն: Քարտապանը պարտավորվում է անհապաղ տրամադրել պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները:

6.11. Քարտապանը նաև թույլատրում է Բանկին իր մասին հարցումներ իրականացնել «ԱՔՌԱ Բրեդիթ Ռեփորթինգ» ՍՊԸ-ին, ՆՆ Կենտրոնական բանկի ռեգիստրին և այլ անձանց՝ առանց Քարտապանի լրացուցիչ թույլտվության և հանձնարարության:

7. ՔԱՐՏԻ ԿՈՐՈՒՄՏԸ

7.1. Քարտի կորստի կամ հափշտակության մասին Քարտապանը պետք է անհապաղ տեղեկացնի Բանկին հետևյալ եղանակներով.

ա) - հեռաձայնելով Բանկի + 37410 511 210 հեռախոսահամարին՝ Բանկի աշխատանքային ժամերին, հայտնելով Ձեր Կիմումում նշված գաղտնաբառը (սա PIN ծածկագիրը չէ) կամ

- ԱրՔԱ պրոցեսինգային կենտրոնի + 37410 440 380 հեռախոսահամարին՝ Բանկի ոչ աշխատանքային, տոնական օրերին և ժամերին: Բանկը կարող է պահանջել Քարտապանի բանավոր կարգադրության գրավոր հաստատում, նախքան Քարտն արգելափակելը: Բանավոր դիմումի սրացումից և Քարտապանի ինքնությունը ճշտելուց հետո Քարտն արգելափակվում է:

բ) գրավոր ձևով՝ ուղարկելով պարզաճ գրավոր հավաստագրում +37410 511 212 ֆաքսով կամ card@conversebank.am էլ-հասցեով, կամ ներկայացնելով գրավոր դիմում Բանկի ցանկացած մասնաճյուղ: Գրավոր դիմումի սրացումից հետո Քարֆն արգելափակվում է մեկ բանկային օրվա ընթացքում:

7.2. Արգելափակման պահից հետո Քարֆով կարարված գործարքների համար Քարֆապանը պարասխանավություն չի կրում:

7.3. Արգելափակումից հետո Քարֆապանը քարֆը հայրնաբերելու դեպքում պետք է Բանկին փեղեկացնի այդ մասին: Քարֆի գործողությունը կարող է վերականգնվել արգելափակումից հանելու համար սահմանված վճարները զանձնելուց հետո:

8. ՔԱՐՏԵՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Քարտերը չեն կարող օգտագործվել որևէ անօրինական գործունեության կամ դրանից բխող գործարքների համար: Քարֆային գործառնությունների օրինականության շուրջ որևէ կասկածի առկայության դեպքում Բանկն իրավունք ունի առանց Քարֆապանին ծանուցելու չկարարել գործարքը և/կամ բլոկավորել Քարֆը: Բանկը կարող է նաև լրացուցիչ փեղեկություններ և փաստաթղթեր պահանջել՝ նախքան գործառնության կարարումը:

8.2. Բանկը կարող է չկարարել գործարքները և/կամ բլոկավորել Քարֆը, եթե Քարֆային գործառնությունը կապված է հանրության կարգերին ու բարոյականությանը հավաստ գործարքների հետ (օրինակ՝ ինտերնետային մոլեխաղեր, բացահայտ անպարզաճ բովանդակություն ունեցող առարկաների և նյութերի ձեռքբերում և վաճառք և այլն): Քարֆի լոգոփայի արտացոլումը գործարքների կարարման վայրերում, ներառյալ՝ ինտերնետային կայքերում, չի նշանակում, որ գործարքն օրինական է:

8.3. Բանկը պարփավոր է չհրապարակել և երրորդ անձանց չբրամադրել Քարֆապանի վերաբերյալ Բանկին հայրնի դարձած և բանկային գաղտնիք կազմող փեղեկությունները: Այդուհանդերձ, Բանկն իրավունք ունի նման փեղեկություններ հաղորդել վճարահաշվարկային համակարգերի օպերատորներին, պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպություններին, Նայասպանի Նանրապետության Կենտրոնական Բանկին, «ԱԲՈԱ Զրեդիթ Ռեփորթինգ» ՍՊԸ-ին և Բանկի այլ գործընկերներին:

9. ՔԱՐՏԱՊԱՆԻ ԵՎ ԲԱՆԿԻ ՆԱԴՈՐՂԱԿՑՈՒՄԸ

9.1. Բանկի և Քարֆապանի միջև փաստաթղթերի առաքումը (ներառյալ՝ Կանոնների և Մակագների փոփոխությունների մասին Քարֆապանին ծանուցելն ու քարֆային հաշվի քաղվածքները փրամադրելը) իրականացվում է գրավոր ձևով՝ Կիմումում Քարֆապանի նախընտրած եղանակով:

9.2. Եթե Բանկի և Քարտապանի միջև հաղորդակցումն իրականացվում է փոստային կապի միջոցով, Բանկը պարտախանարվություն չի կրում փաստաթղթերի հանձնման ուշացման կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկարվության բացահայտման համար:

9.3. Քարտապանը պարտավոր է անհապաղ Բանկին ծանուցել Քարտապանի հասցեի և կապի միջոցների ցանկացած փոփոխության մասին: Նախքան Քարտապանի ծանուցումը ստանալը, Բանկը Քարտապանի հետ կհաղորդակցվի վերջինիս կողմից նախապես սրբամարկված տվյալների հիման վրա:

9.4. Բանկն իրավունք ունի ձայնագրել Բանկի և Քարտապանի բանավոր հաղորդակցությունը, ներառյալ՝ հեռախոսային խոսակցությունները: Կարարված ձայնագրությունները ծառայում են ապացույց՝ հնարավոր փարաձայնությունների կարգավորման ժամանակ:

10. ՔԱՐՏԱՊԱՆԻ ԵՎ ԲԱՆԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

10.1. Քարտապանի քարտի սպասարկումը ենթադրում է տեղեկարվական տեխնոլոգիաների և կապի միջոցների կիրառում և երրորդ անձանց ծառայությունների օգտագործում: Քարտապանն ընդունում է, որ Բանկը չի կարող պարտախանարվություն կրել քարտերով իրականացվող գործառնությունների հետևանքով Քարտապանի վնասների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասներն

առաջացել են Բանկի աշխատակիցների դիտարկության կամ կոպիտ անզգուշության հետևանքով:

10.2. Քարտապանը և Բանկը կազարվեն միմյանց առջև սրանձնաձև պարտավորությունների խախտման համար սահմանված պարտախանարվությունից, եթե խախտումն արդյունք է կապի ընդհատումների, էլեկտրամագնակարարման դադարեցման, պերական մարմինների ակտերի, քաղաքացիական հուզումների, երկրաշարժի, հեղեղումների և փվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի այլ հանգամանքների ազդեցության:

11. ՎԵՃԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

11.1. Քարտերի փրամադրման և սպասարկման կապակցությամբ Բանկի և Քարտապանի ցանկացած փարաձայնություն ենթակա է լուծման բարեկամարար՝ բանակցությունների միջոցով:

11.2. Բանկը և Քարտապանը պարտավորվում են մանրամասն ուսումնասիրել յուրաքանչյուր փարաձայնության հիմքերն ու առաջարկել փոխադարձարար մեռնարու լուծում:

11.3. Քարտապանն իրավունք ունի Բանկի հանդեպ իր գույքային պահանջները ներկայացնել ՏՏ ֆինանսական համակարգի հաշվարարին, եթե Քարտապանի պահանջի չափը չի գերազանցում փառը միլիոն ՏՏ դրամը կամ համարժեք արարարժույթը: Նախքան ֆինանսական համակարգի հաշվարարին

դիմելը Քարտապանը պարտավոր է իր պահանջը գրավոր ներկայացնել «Նոնվերս Բանկ» ՓԲԸ գործադիր փնտրենին՝ նշելով՝ թե որն է Բանկի խախտումը և ներկայացնելով խախտման փաստի հիմնավորումներ: Քարտապանի պահանջը սրանալուց հետո փաստն աշխատանքային օրվա ընթացքում Բանկը կքննարկի Քարտապանի պահանջը և կներկայացնի վերջնական պատասխան: Բանկի պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում Քարտապանն իրավունք կունենա դիմել ֆինանսական համակարգի հաշտարարին: Այդուհանդերձ, Բանկը հրաժարվում է կնքել ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու համաձայնագիր:

12. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12.1. Բանկի և Քարտապանի միջև կնքված գրավոր համաձայնությամբ կարող են սահմանվել պայմաններ, որոնք կնախատեսեն այլ բան, քան սույն Կանոնները: Այդ դեպքում կզերակայի Բանկի և Քարտապանի միջև կնքված լրացուցիչ համաձայնագիրը:

12.2. Բանկն իրավունք ունի գրավ դնել, ինչպես նաև այլ անձանց փոխանցել Քարտերի հետ կապված Բանկի բոլոր իրավունքները՝ առանց Քարտապանի համաձայնության: Այդ դեպքերում Բանկը պարտավորվում է Քարտապանին զերծ պահել հնարավոր բոլոր վնասներից և ծախսերից:

12.3. Սույն Կանոններն ու Սակագները պարունակում են Նոնվերս Բանկի կողմից սահմանված դրույթները, որոնք կարգավորում

են Քարտերի փրամադրման և սպասարկման հետ կապված հարաբերությունները: Այդուհանդերձ, ArCa, VISA, MasterCard և այլ վճարահաշվարկային կազմակերպություններն ու համակարգերը կարող են ունենալ քարտի կոնկրետ փասակներով գործարքների իրականացման հարուկ սահմանափակեր և այլ կանոններ, որոնք նույնպես ենթակա են պահպանման Բանկի և Քարտապանի կողմից:

13. ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱՎԱՆՂՆԵՐԻ ՆԱՏՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Նարզելի ավանդաբու,

Ձեր ավանդի հարուցման երաշխավորողն է Ավանդների հարուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Նիմնադրամ): Նիմնադրամի գրնվելու վայրը՝ ՄՄ 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, «Էրեբունի պլազա» բիզնես կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ. Նեոախոսը՝ (37410) 582321, 582322 Ինտերնետային կայքը՝ www.fsm.am:

Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հարուցումը երաշխավորելու մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) սահմանումներին:

Նայուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հարուցման հետևյալ դեպքերում.

1. Եթե Նայասարանի Նանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Նայասարանի

Նանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ

2. Եթե Նայասպանի Նանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Նայասպանի Նանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Չեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Չեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ արտարժույթային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հերկյալն են՝

Ավանդի տարբերակի կատեգորիան	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և՛ ՆՆ դրամային և՛ արտարժույթային ավանդ	
			Եթե դրամային ավանդը 1 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 1 միլիոն դրամից քիչ է
Չվանդի կրպակավորման առավելագույն ավել	2 միլիոն ՆՆ դրամ	1 միլիոն ՆՆ դրամ	2 միլիոն ՆՆ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	1 միլիոն ՆՆ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդի արժեքը և արտարժույթային ավանդը՝ մեկ միլիոն դրամի և ևս արժույթի և/կամ դրամային ավանդի արժեքի հարաբերակցությամբ)

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համարել բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Չեր առանձին բանկային ավանդի և համարել բանկային ավանդում Չեր մասնաբաժնի հանրագումարը Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե Դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք պարտավորություն, ապա հարուցման ենթակա գումարը կհաշվարկվի Չեր բանկային ավանդի և պարտավորության դրական փարբերության հիման վրա՝ Օրենքով սահմանված կարգով և չափով: Երկու կամ ավելի ավանդատուների համարել բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:

Եթե պայմանագրով սահմանված չեն համարել բանկային ավանդի ավանդադուներին մասնաբաժինները, ապա համարել բանկային ավանդն ավանդադուների միջև բաժանվում է հավասարաչափ: Բանկային ավանդի հաբուցումը կադարվում է միայն հայկական դրամով: Արարածության բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հաբուցման դեպքը փեդի ունենալու օրվա դրոշյամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Չեր բանկային ավանդը չի հաբուցվում, եթե հաբուցման դեպքը փեդի ունենալու օրվա դրոշյամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Չերաշխատվող ավանդի ավանդ

Չեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

ա) Դուք հանդիսանում եք փվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընդհանրի անդամ,

բ) Դուք հանդիսանում եք փվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընդհանրի անդամ,

գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Չեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,

դ) Չեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել:

ե) Չեր ավանդը փվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին փվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանափայլ բանկային ավանդների փոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող փոկոսադրույքով,

զ) Չեր ավանդը ներդրված է բանկի՝ Նայասֆանի Նանրապետության փարաժքից դուրս սփեդված մասնաճյուղերում:

Երաշխատվող ավանդների հաբուցման կարգը, ժամկետները

Հաբուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Տիմնադրամը հայտարարություն է հրապարակում հաբուցման դեպքի մասին: Հաբուցման դեպքի օրվան հաջորդող երեսներյա ժամկետում Տիմնադրամը անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Չեր ավանդների հաբուցման գործընթացը: Գործընթացը սկսվում է գանգվածային լրափական միջոցներում հաբուցման վերաբերյալ Տիմնադրամի կողմից լրացուցիչ հայտարարություն հրապարակելու պահից: Դուք կարող եք գրավոր պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հաբուցման դեպքի օրվան հաջորդող մեկ փարվա ընթացքում: Նշված ժամկետում Չեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Տիմնադրամի կողմից Չեր երաշխավորված ավանդի հաբուցում չի իրականացվի: Տիմնադրամը պարափոր է իրականացնել ավանդադուներին պահանջներով հաբուցումները՝ գրավոր պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք ամիսների ընթացքում, բացառությամբ

Օրենքով նախատեսված դեպքերի: Երաշխավորված ավանդի գումարի հաբուցումից հետո անվճարունակ բանկի հանդեպ Ձեր ունեցած դրամական պահանջը հաբուցված գումարի չափով համարվում է բավարարված:

Տարուցման չափը գերազանցող գումարը համարվում է անվճարունակ բանկի պարավորությունը Ձեր նկատմամբ:

14. ՄԱՆՈՒՑՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱՇՏԱՐԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեղեկացնում ենք, որ "Ֆինանսական համակարգի հաշվարարի մասին" ՏՊ օրենքի համաձայն՝ Դուք կարող եք "Կունվերս բանկ" ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների և փաստ միլիոն ՏՊ դրամը կամ համարժեք արժույթով գումարը չգերազանցելու գույքային պահանջ ներկայացնել ֆինանսական համակարգի հաշվարարի քննությանը: